Պայմանագիր N 01

Սուբսիդիայի տրամադրելու մասին

քաղ. Երևան 04 02 2022թ.

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, ի դեմս ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վարդան Մովսիսյանի (այսուհետ ՀՀ ոստիկանություն), որը գործում է ՀՀ ոստիկանության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Երեխայի զարգացման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Լուսինե Գալստյանի, (այսուհետ Կենտրոնը)՝ որը գործում է Կենտրոնի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմերը), ՀՀ կառավարության 2003 թ. Դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 1937–Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թ.- ի դեկտեմբերի 23-ի « 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին » թիվ 2121–Ն որոշումով՝ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 03 բաժնի 01 խմբի 01 դասի 06 « Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» 1158 ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում նախատեսված 13,000,000 (տասներեք միլիոն) ՀՀ դրամ Սուբսիդիայի գումարը, որը « Երեխայի զարգացման կենտրոն» ՊՈԱԿ-ին 2022թ.-ի առաջին եռամսյակի համար տրամադրվող սուբսիդիայի առավելագույն չափն է, ՀՀ ոստիկանությունը պայմանագրով սահմանված կարգով տրամադրում է Կենտրոնին: Կենտրոնը պարտավորվում է տրամադրված ֆինանսական միջոցներն օգտագործել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և իրականացնել Կենտրոնի կանոնադրությամբ սահմանված համապատասխան գործունեությունը:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

Կողմերի իրավունքները

2.1 ՀՀ ոստիկանությունը իրավունք ունի.

2.1.1 Պահանջել Կենտրոնից սույն պայմանագրի 2.1.2 ենթակետում նշված ժամկետում ներկայացնել հաշվետվություններ:
2.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Կենտրոնի կողմից մատուցված ծառայությունների ընթացքը՝ առանց ՝ միջամտելու նրա բնականոն գործունեությանը , պահանջել տեղեկատվություն կատարվող աշխատանքների բնութագրերի վերաբերյալ:
2.1.3 Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

2.2. Կենտրոնը իրավունք ունի.

2.2.1. Տեղեկացնել ՀՀ ոստիկանությանը սույն պայմանագրով նախատեսված գործունեության ընթացքում տեղ գտած թերությունների վերաբերյալ;
2.2.2. Իր կողմից իրականացվող աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել ՀՀ ոստիկանությանը:
2.2.3 Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

Կողմերի պարտականությունները

2.3. Կենտրոնը պարտավոր է.

2.3.1 Ապահովել ոստիկանության ծառայողների, ոստիկանության քաղաքացիական ծառայողների, ոստիկանությունում տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների երեխաների ուսումնադաստիարակչական գործունեության կազմակերպումը և իրականացումը, մանկավարժական գործունեությունը՝ երեխայի ֆիզիկական և հոգեբանական առողջության ամրապնդման ոլորտում և երեխաների հոգեբանական խորհրդատվությունը՝ կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկային, նպատակներին, կարգին և պայմաններին համապատասխան: Կենտրոնը պարտավորվում է գործունեությունը իրականացնել 5-օրյա աշխատանքային շաբաթով, օրվա 10.5 ժամյա տևողությամբ: Հաճախող երեխաների միջին ամսական թիվը 110 երեխա, մեկ երեխայի համար նվազագույն շահավետ միջին ամսական գինը 39393.9 (երեսունինը հազար երեք հարյուր ինսուներեք) ՀՀ դրամ, ընդամենը 2022 թ-ի առաջին եռամսյակի համար ՝ 13.000.000 (տասներեք միլիոն) ՀՀ դրամ:

2.3.2 Ներկայացնել ՀՀ ոստիկանություն սույն պայմանագով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովող ծախսերի նախահաշիվը և հաստիքացուցակը:
2.3.3. ՀՀ ոստիկանությանը ներկայացնել կատարված ծախսերի եռամսյակային և տարեկան հաշվետվությունները՝ ՀՀ ֆինանսների 2018 թվականի փետրվարի 4-ի N 104 -Ն հրամանով հաստատված կարգին և ժամկետներին համապատասխան: Կատարել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի 706- Ն որոշման պահանջները: ՀՀ ոստիկանության հետ կնքել հանձնման-ընդունման ակտեր՝ ՀՀ Ֆինանսների նախարարի 2010 թվականի մայիսի 18-ի N 346-Ն հրամանով հաստատված օրինակելի ձևերի համապատասխան:

2.4. ՀՀ ոստիկանությունը պարտավոր է .

2.4.1. Սուբսիդիան տրամադրել Պայմանագրի 1. կետով նշված ծրագրի և միջոցառման 4511 <<Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին>> հոդվածով նախատեսված միջոցների հաշվին:
Պայմանագրի շրգանակներում մատուցվող ծառայությունների կատարման ընթացքում անհրաժեշտ աջակցություն և օժանդակություն ցուցաբերել « Երեխայի զարգացման կենտրոն » ՊՈԱԿ -ին:
2.4.2 Վերլուծել Կատարողի կողմից մատուցվող ծառայությունները, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման համար:
2.4.3. Սուբսիդիան Կենտրոնին տրամադրել անկանխիկ, յուրաքանչյուր ամիս. վճարման ժամանակացույցին համապատասխան:

3. Վճարման կարգը և ժամկետները

3.1. 2022 թվականի առաջին եռամսյակի համար նախատեսված ՀՀ պետական բյուջեով հատկացվող պետական աջակցության առավելագույն չափը կազմում է 13.000.000 (տասներեք միլիոն) ՀՀ դրամ:
3.2. ՀՀ ոստիկանությունը վճարումներն իրականացնում է համամասնորեն՝ ամսական կտրվածքով, ոչ ուշ քան յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 10-ը՝ Պայմանագրի << հավելված 1 >> -ով հաստատված ժամանակացույցին համապատասխան:

4. Պայմանագրային պարտավորությունների հանձնման– ընդունման կարգը:

4.1 ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 24-ի թիվ 1937–Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1-րդ կետի համաձայն Կողմերի միջև ստորագրվում է հանձնման– ընդունման ակտ, ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով հաստատված ձևին և ժամկետներին համապատասխան:

5.Կողմերի պատասխանատվությունը

5.1 Սույն պայմանագրով սահմանված պայմանների չկատարման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.Պայմանագրի գործողության ժամկետները և այլ դրույթներ

6.1 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

6.2 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

6.3 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունների

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն
ք.Երևան , Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011021947 , ՀՎՀՀ 01533334
Հեռ: 010 59 60 39
Էլ.Փոստ: policetv.gnumner@mail.ru

_____ **Վ.Մովսիսյան**
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ /

L.S.

ԿԵՆՏՐՈՆ

«Երեխայի զարգացման կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան , Նալբանդյան 106/1
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018005091, ՀՎՀՀ 01554204
Հեռ: 012 21 00 11
Էլ.փոստ: ezkpoak@mail.ru

_____ **Լ.Գալստյան**
/Կենտրոնիտնօրեն /

L.S.

Հավելված N 01

«04» «02» 2022 թ.-ի

կնքված թիվ 01 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.Հիմնարկի անվանումը « Երեխայի զարգացման կենտրոն » ՊՈԱԿ

3.Հիմնարկին սպասարկող գանձապետական ստորաբաժան. ԱՄ 9000 ՀՀ Ֆին.Նախ. Գործառնական.վարչութ.

2.Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝

4.Գանձապետական բյուջետային հաշվի համարը 900018005091

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախարարություն
03	01	01	06	105019

Ծրագրի անվանումը Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում և կառավարում

կենտրոնացված միջոցառումների մոնիտորինգի վերահսկողության իրականացում

հ/հ	Ծառայության անվանում	Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ՝ պետական բյուջեից միջոցների կամ արտաբյուջետային միջոցների հաշվին, ընդ որում՝												
		1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ			Ընդամենը /հազ.դրամ/
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	Ծառայության մատուցում	5000.0	9000.0	13000.0	13000.0	13000.0	13000.0	13000.0	13000.0	13000.0	13000.0	13000.0	13000.0	13000.0
	Ընդամենը													13000.0

ՀՀ ոստիկանության պետի տեղակալ,
ոստիկանության գնդապետ՝ Վ.Մովսիսյան

« Երեխայի զարգացման կենտրոն » ՊՈԱԿ-ի
տնօրեն՝ Լ.Գալստյան

գլխավոր հաշվապահ՝ Զ.Յուխանանա

«04» 02 2022թ. Կնիքի տեղը

«04» 02 2022թ. Կնիքի տեղը